

Թիւ 26865
Ապրիւ 80, 1979

Հոգեշնորհ

Տ. Վազգէն օ. Վրդ. Քէշիշեան
Հովկւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախազահ ծխական Խորհուրդի
Եւ Առաջնորդի Փոխանորդ Գանատայի
Թորոնթօ.

Աիրելի Հայր Վազգէն,

Այսօր սաացանք Մարտ 26, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք
թէ ձեր նախազահութեամբ Փետրուար 25ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին
մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայաց-
նելով բուէարկութեան արդիւթքը՝ կը ինդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշ-
տօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ
առորեւ տրուած ցանկին:

Համեցէք փիթթվվԱռաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի
անդամոց անունները եւ ծխական ժողովին ներկայացուած տեղեկագիրները ւպատկեք:

Օր հնֆլով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօ-
նակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն
մեր Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուր-
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տակոր Երէցեան
Հէրի Արթինեան
Աւահէ Միննէթեան
Սաեփան Սէմէրմեան
Սարգիս Զիլինկիրեան